

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԶԵՆՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՋ

16 փետր. 1947ի կիրակին, Ն. Ս. Օծու-
րին Ս. Տ. Գարեգին Կաթողիկոս Մեծի
Տանն Կիլիկիոյ, Անթիլիասի Մայր Տոնարին
մեջ եպիսկոպոսական աստիճան շնորհք եւ
Հոգեւեորն Տ. Փառեհ, Տ. Զարեհ, Տ. Կերե-
նիկ, Տ. Խորեհ եւ Տ. Ղեւոնդ Վարդապետ-
ներուց:

Զեռնագրութեան արարողական եւ ծի-
սական կարգուսարքին հսկած է Եգիպտոսի
Առաջնորդ Գեր. Տ. Մամբէկ Ս. Արեւայիս-
կոպոս Սիրունեանը որ Վենիսիայի հա-
ւերով եկած է ոչ միայն ներկայ գտնուելու
շնորհաբաւութեան հանդէսին, այլ նաեւ,
կատարելու *խարտաւիշակի* պատճենը: Զեռ-
նագրութեան ներկայ եղած են նաեւ Գա-
մասկոսի թեմին նորընտիր Կաթողիկոսական
Փոխանորդ Գեր. Տ. Ռուբէն Ս. Արեւայիս-
կոպոսը եւ Պէրուքի Կաթողիկոսական Փո-
խանորդ Գեր. Տ. Խաչ Ս. Արեւայիսկոպոսը,
հանդերձ եկեղեցական դասուն եւ ծաղկաբո-
ւեան մեծ բազմութեան եւ հաւաքներու ըն-
տիր հոյի մը: Ս. Արարոյս Ամեն. Ս. Պատ-
րարքին կողմէ ձեռնադրութեան ներկայ էր
Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեանը:

Անթիլիասի այս փառաւոր օրուան մեջ,
մեր միտքը անգամ մը եւս կ'երթայ այն մեծ
հոգիներուն եւ հիմնադիրներուն, Վեն. Սա-
հակ Կաթողիկոսին մինչեւ Բարգէն եւ Պեռ-
ոս Կաթողիկոսները եւ անզուգական Շահե
Սրբազանը, որոնց շնորհիւ Անթիլիասը ի-
րականութիւն եւ արդիւնք ներկայ մեր ազ-
գային եւ եկեղեցական կեանքին մեջ, եւ
Միջերկրականի ափունքին վրայ, ուրիշ բը-
նիկ եւ եկուոր ազգերու բազմաթիւ կրօնա-
կան հաստատութեանց դրացնութեանը մեջ,
մենք նա մեր կարգին ունեցանք մեր հայ-
կական սրբավայրն ու հաստատութիւնը:

Մտաւոր եւ բարի ձեռներէ օրնուած
գործը պիտի շարունակէր իր ընթացքը նոր
եւ աւելի կազմակերպուած նիւով մը, շնոր-
հիւ Նորին Ս. Օծուրին Տ. Տ. Գարեգին
Կաթողիկոսի որ իր անսգիւս եւ բազմեւս
արժանիքներով, նախախնամական դեր մըն է
որ կը կատարէ նուիրապետական այդ ա-
բողին վրայ:

Եպիսկոպոսական այս ձեռնադրութիւ-
նը պոսակումն է հոգեւոր կրթութեան այդ
գործին ու փառաւորումը սրբազան այն
նպատակին, որուն ձեռնարկուներն ու հո-
գատները, վստահ ենք թէ, վերեւ ամենեւ
աւելի կը բերելին ի սես այս հոգեհանդե-
սին, վասն զի անոնց սերն ու սեսիլն է որ
մարմին կ'առնէ այս կերպ, հոգեւոր ժա-
ռանկութեան մը լուսակարմիր գիծով: Յե-
տոյ այս ձեռնադրութիւնը իր պատմական
արժէքը ունի Անթիլիասի Կաթողիկոսաւ-
նին համար. նախ Նորին Ս. Օծուրին Տ. Տ.
Գարեգին Կաթողիկոս իր եպիսկոպոսական
անդրանիկ ձեռնադրութիւնն է որ կը կա-
տարէ. երկրորդ՝ Անթիլիասի վրայ կը զար-
նուի նուիրապետական նոր կենի մը, վասն
զի ինչպէս թիւնք, անոր հովանիին սակ ծը-
նունդ առած ու հասած սրբազան գործին
մեծ երախայրիքն է որ այսպէս կու գայ
լեցնելու մեր եկեղեցւոյ սպասին բարձրա-
գոյն աստիճանը:

Նորին Ս. Օծուրին Տ. Տ. Գարեգին Ս.
Կաթողիկոսի մեծ է իմաստուն գործունեու-
թեան այս նոր էայլը բոս յամենայնի օրտա-
նուշ է եւ գովելի, երբ նկատի ունենանք որ
Անթիլիասի կաթողիկոսական տարուին մեջ
միայն մէկ եպիսկոպոս կը մնար, եւ գրի-
խաւոր թեմերը չունէին իրենց անհրաժեշտ
վերաստուանները:

Վասն զի առանց եպիսկոպոսութեան
չկայ եկեղեցի, չկայ հոգեւոր իշխանութիւն:
«Սինոն» յանուն Նորին Ամեն. Ս. Պատ-
րարք Հօր եւ Ս. Յակոբեանց բովանդակ
Միաբանութեան, իր օրագրին ուրախութիւ-
նը կը յայտնէ Նորին Ս. Օծուրին Տ. Տ. Գա-
րեգին Կաթողիկոսի, այս շնորհաբաւութեան
թեան առիթով, յայտնելով նոյնպէս իր օր-
նորհաւորութիւնները նորապսակ եպիսկո-
պոսներուն, մաղթելով կարողութիւն եւ
յաջողութիւն, իրենց նուիրապետական այս
բարձր եւ բազմապահանջ աստիճանին եւ
պատճենին մեջ: